և եթէ տաճկաց զֆօթօզն՝ որ քան զտուեալ չափ առաւել գտաւ, հրապարակաւ ի քաղաքամիջի անդ կտրեցին կիսով չափ ընդ մազին. և զեախան ֆէրաճէին կտրեալ բովանդակ՝ ծակեցին ի միջոյ և արկին ի պարանոցն. և զմիոյ ուրումն զքիթն կտրեցին վասն զէմպիլ պիչիմի եազմախ կապելոյն. և զմիոյ ուրումն ի կտրելն զֆօթօզն՝ ճղքեցին դանակաւ և զերեսն։ Եւ հրաման սաստիկ թէրզիներուն, զի թէ ոք կարեսցէ զեախայ ֆէրաճէի մեծ քան զտուեալ չափն թէրզի պաշիին, ի թին մատնեսցի անխնայ։ (Հ. Յովհաննէս Այվազեան առ Մելգոնեան, 1772 Օգոստ. 29. [Կ. Պոլիս])։

## յժդ.

Ես արդէն ձանձրացեալ ի կառավարութենէ, նեղացեալ ի պաշտօնէ իմմէ՝ գրեցի գիր հրաժար[մ]ան ի Հռոմ։ Եւ երկիցս պատասխանեցին կարտինալք համբերել ևս սակաւ ինչ՝ մինչև գտցեն ի տեղի իմ ոմն ընդունակ, և ապա գրեսցեն ինձ գիր հրամանի երթալ ի հռոմ, և հանգչիլ անդ։... ես խնդրեցի եկամուտ բաւական ի նոցանէ՝ որով ըստ պատուի աստիճանի իմոյ կարացից ապրիլ։ (Արանաս եպս. առ Մելգոնեան, 1772 Հոկտ. 17. [Կ. Պոլիս])։

## յժե.

Սառաֆոզլու Սարգիս եպսն. (որ երբեմն եկն ի Վենետիկ), այժմ դարձեալ եմուտ ի նաւ գնալ նախ (կարծեմ) ի մարչիլիա, և ապա ի Վենետիկ. և եկ ի ճանապարհ ի սեպտ. իբր 29։... Հոկտ. 12 Սուլթան մուստաֆային փոքր արու մանուկն որ էր իբր Ը ամեայ, մեռաւ ի ժանտամահէն, ասեն։ (Հ. Յակ. Զաքէ. առ Մելգոնեան, 1772 Նոյ. 3. [Կ. Պոլիս])։